



ՄԻՔԱՅԷԼ, ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄՐ.

Անցեալ տարի սեպտեմբերի 23-ին, կիրակի, մենք բացինք Գաւառ Քաթիպայի արձանը :

Այսօր, նոյնպէս սեպտեմբերի 22-ին, կիրակի, մենք բանում ենք Միքայէլ Նալբանդեանի արձանը նոյն ս. կառ լանքում :

Հրաւէրներ ցրված չեն, ներկայ են մօտաւորապէս 30 մարդ : Հանդէսը համեստ է : Օրը դարմանալի օր է, յիշեցնում է իրան Նալբանդեանի ալէկոծ կեանքը : Տուրա, սաստիկ քամին փչում է, տանում է : Ամպերը պատառպատառ փախչում են երկնքի կամարի վրա և սակայն արեգակը առատ թափում է իր փայլը : Զարմանալի է եւ այն, որ հեռու մեզանից՝ Պարիզում, այսօր թաղում են Էմիլ Զօլային : Երկուսն էլ յայտնի գրողներ և գործիչներ : Զօլան հարուստ երկրի բաղդաւոր դաւակ և Նալբանդեան՝ աղքատ երկրի աղքատ դաւակ : Երբ Զօլան գուրս է գալիս հայրենիքի դաշտը բարութեան, ճշմարտութեան սերմերը սերմանելու, նա տեսնում է ամեն կողմից սէր, յարգանք, կարեկցութիւն և գործում է լուսաւոր երկրում լուսաւոր ազգի մէջ և մեռնում է պաշտով, հասկացած : Ինչ Նալբանդեանը գործում է ողջ կեանքը մութի, խաւարի մէջ, մաքառելով մութի, խաւարի հետ և մեռնում է չը հասկացիված, տալիս և մոռացիված :

Եւ մինչդեռ վանահայր Վահան վարդապետը կարդում է աւետարանը, ևս մտաբերում ևս հպարտութեամբ, թէ ինչ է մեզ թողել իբր ժառանգութիւն 35 տարեկան Միքայէլ Նալբանդեանը և ինչ թողել է Ֆրանսիային մօտ 60 տարեկան հասակին հասած Զօլան :

1866-ին նա մեռաւ : 36 տարուց յետոյ նա վերջապէս ունի իր արձանը , որը լաւ տպաւորութիւն է թողնում եւ պատիւ բերում մեր երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարութեանի տաղանդին եւ ճաշակին :

Մոխրագոյն հատաքարից տաշած է գեղեցիկ կիսարտւորակ fantaisie, որը իջնում է երկու կիսարտւորակ աստիճաններով . հատաքարի միջից սկսվում է սիւն , որի վրա արդէն բարձրանում է մարմարեայ սիւն . վերջինիս վրա ամրացած է դափնեայ ճիւղ արոյրից շինած : Սիւնը վերջանում է կիսարձանով եւ ունի իր վրա գրած հետեւեալ խօսքերը՝ Միքայէլ Նալբանդեան . (նոյնը ոռւսերէն) . 27 X 1830—30 III 1866 :

Կիսարձանը պատկերացնում է մեզ 25 տարեկան երիտասարդ Միքայէլին եւ առնված է նրա 1856 թւականի պատկերից , որը գտնվում է Գր. Սաթրքեանի մօտ . նմանութիւնը աչքի է ընկնում : Չեր առաջին մի եւրօպացի է եւ դա բնորոշ է , որովհետեւ նա ողջ իր կեանքը մեզ ասիացիներին եւրօպականութիւն էր քարոզում :

Այժմ ս . Խաչ վանքում կողք կողքի են կանգնած Ռափայէլ Պատկանեանը եւ Միքայէլ Նալբանդեանը :

Մենք բացինք երկուսի արձաններն էլ *) :

Նրանց երկուսի երկերի լոյս ընծայելու հարցը որոշել է արդէն Նոր-Նախիջեւանի Հայոց Բարեգործական ընկերութիւնը , որը հաւաքում է նիւթեր :

Բաւականանա՞նք :

Բաւականանա՞նք արդեօք կանգնելով արձաններ եւ հրատարակելով նրանց երկերը :

Նս կասեմ՞ ոչ :

Փոքր եւ խեղճ չը մնալու համար պէտք է միշտ յիշել , սիրել , յարգել մեծերին :

Եւ մենք կը ցանկանայինք մի կ ե ն դ ա ն ի արձանով անմահացնել այդ սիրելի անուանները :

Ամենագեղեցիկ կենդանի արձանը կը լինի հեռու Պարսկաստանի խուլ անկիւններից մէկում մի դպրոց , տարրական կամ միջնակարգ , դա կախված կը լինի գումարից , այո՛ , մի դպրոց բանալ յիշատակ Ռափայէլ Պատկանեանի եւ Միքայէլ Նալբանդեանի յիշատակին :

Ահա մեր պարտքը : Երազ է նա դեռ : Բայց որչափ սիրելի կը լինէր մեզ համար այդ երազը իրագործել եւ այդ մեծ պարտքը կատարել . . .

(Մշակ)

Գր. Չալխուշեան

*) Մեր ժողոված գումարը պակասեց , բայց մենք յուշվարին ստանալու եւս ունենք փող . հաշիւը կը պատրաստենք ժամանակին եւ կուղարկենք մեր բոլոր խմբագրատները :

ՕՆ ՈՒՐԵՄՆ

ՕՆ , ուրեմն . . .

Իմ ջերմ ցանկութիւնն է կենդանի արձան կանգնել Գամառ Քաւթիպայի եւ Միք. Նալբանդեանի յիշատակը անմահացնելու համար :

Այդպիսի մի արձան կարող է լինել միայն դպրոց , մի հայ դպրոց Պարսկաստանի խուլ անկիւններէ մէկում :

Յիշեցնելով միշտ երկու անմոռանալի , մեծ եւ անմահ անուններ եւ սերմանելով խաւարի ճիրաններին մասնուած ժողովրդի մէջ բարւոյ եւ արդարութեան գեղեցիկ սերմերը , դպրոցը իբրեւ մի մեծ , ուժեղ զանգակ իւր ղողանջիւնով պիտի սթափեցնէ , զարթեցնէ նրա խորը քնից եւ ցոյց տայ նոր կեանք , նոր ապագայ :

Դարեր արդէն թմրած , քնած , քարացած ազգը կրանայ լայն իր աչքերը , կտեսնէ գեղեցիկ աշխարհ եւ դառն իրականութիւն . նա կմրցէ ազատ , լուսաւոր ազգերի շարքը մանկ :

Ազատ , լուսաւոր ազգեր . . . Ո՛րչափ յետ ենք մնացել նրանցից , որչափ ճիգ եւ ծանր աշխատանք մեզ հարկաւոր են :

Զվհատենք , երբէք չվհատենք :

Հայերիս լուսաւորութեան հարցը ամենակարեւորն է այժմ :

Գամառ-Քաւթիպայի մտերիմը եւ հետեւողը , ես պաշտում եմ մեր եկեղեցին , բայց Գամառ-Քաւթիպայի հետ ես միշտ պիտի ասեմ , եկեղեցին չէ մեզ պահողը , այլ լեզուն , միայն լեզուն :

Հայերէն խօսել եւ ես կաւելացնեմ՝ հայերէն մտածել , ահա ինչ է մեզ պէտք եւ ինչ կտայ մեզ մեր դպրոցը :

Երբ մեր լեզուն կորցուի , մեր եկեղեցու պատերը չեն պատասխարել մեզ եւ մենք կանհետանանք , թողնելով միայն փոքր բարի յիշատակներ եւ մեծ եւ ճոխ աւերակներ . . .

Հայերիս լուսաւորութեան հարցը ամենակարեւորն է այժմ : Թող այդ հասկանայ եւ իմանայ ամեն մէկը մեզանից , որ կուսակցութեան , բանակի եւ եկեղեցու չպատկանի , միեւնոյն է :

Դպրոցներ պէտք է բանալ , դպրոցներ հիմնել ազգային լուսաւորով , ազգային կոպէկներով , ազգային այն լուսաւորով եւ կոպէկներով , որով մենք տաճարներ ենք շինել եւ շինում : Դպրոցն էլ տաճար է : Ափսո՛ս , հայրենասիրութիւնը այրում է մեր սրտերը միայն այն բուպէները , երբ գինու բաժակը փրփրում է մեր ձեռքում : Գինին է , որ այրում է մեր սրտերը եւ մենք երբէք հայրենասէրներ եղած չենք : Եւ գինու վերջի կաթիլի հետ մարում է եւ մոխրով ծածկվում կրակը մեր սրտերում :

Ի՞նչ է պատճառը :

Հայի արիւ՞նը նուազացել է , թէ հայի արեան մէջ ջուրը աւելացել է :

Հայերիս լուսաւորութեան գործը ամենակարեւորն է այժմ : Հասկանանք վերջապէս այդ եւ քարոզենք անդադար :

Ով ունի ականջ լսելու , խելք հասկանալու եւ սիրտ կարեկցելու , նա , որի համար թանգ է մեր սերնդի ապագան , ազգի ապագան , ամեն մի ազնիւ հայ այժմ իրան պիտի կարծէ կանգնած զանգակատանը , ժամկոչ , եւ պիտի քարոզէ միշտ բանալ հայ դպրոցներ , լուսաւորել ազգը , ազատել նրան խաւարի ճիրաններից եւ տանել նրան դէպի լոյսը եւ տալ նրան այդ լոյսը , որպէսզի խաւարը չքանայ , անհետանայ մեզանից . . . խաւարի մէջ է մեր անխուսափելի կորուստը , այժմ :

Սիրելի հայրենակիցներ , դուք պատրաստ էք գործել փոխանակ խօսելու անվերջ , վիճելու անվերջ : Ես դիմում եմ ձեզ երկու անմուռաց հայ գործիչներին՝ Պատկանեանի եւ Նալբանդեանի արձանների պատուանդաններից : Վաղուց է քնել են մեր հին ժամկոչները . չկան դեռ նորերը : Եւ սակայն մենք սպասում ենք , սպասում ենք , որ կգան ժամկոչները եւ կշտապեն իրանց զանգակատները : Յանկարծ կլսուի ազատութեան կոչը , ազատութեան ամենամեծ ստրկութիւնից՝ խաւարի , մութ ճիրաններից : Հեռուից , շատ հեռուից ես դժուար նկատում եմ այն ճանապարհը , որ պիտի տանէ մեզ եւ դնէ լուսաւոր եւ ազատ ազգերի շարքը : Կա՞յ այդ ճանապարհը : Ե՞րբ պիտի տեսնենք նրան բոլորս : Ե՞րբ :

Չվհատենք եւ փորձենք : Ահա մի գեղեցիկ , սուրբ գործ : Ժողովեցէք փող Պարսկաստանի հայերի լուսաւորութեան համար : Բանանք մի դպրոց Գամառ-Քաթիպայի եւ Միք. Նալբանդեանի յիշատակները անմահացնելու համար : Եթէ փորձը յաջողուի , մենք կգործենք դարձեալ , հաւատացած , որ գործելու ընդունակ ենք եւ մենք :

Օ՛ն , ուրեմն , օ՛ն ուրեմն . . .

Չկորցնենք ժամանակ (*) :

ԳՐ. ՉԱԼԽՈՒՇԵԱՆ

Մ Ա Մ ՈՒ Լ Ի Բ Ա Ժ Ի Ն Ը

F. MACLER , Moïse de Khoren et les travaux d'Auguste Carrière. (Extr. de la «Revue Archéologique»). Paris 1902. 8^o pp. 12.

Պ. Ֆրեդերիկ Մակլէր նորագոյն հայերէնագէտներու մէջէն աչքի կը զարնէ անոր համար , որ ձեռնարկած է լուրջ երկասիրութիւններու եւ հայերէնէ ֆրանսերէն թարգմանութիւններու : Դեռ վերջերս էր Journal Asiatique-ի մէջ երեւաց Միսիթար Գոչի առակաց ֆրանսերէն թարգմանութիւնը , պ. Մակլէրի գրչէն ելած : Իսկ այս փոքր աշ-

(*) Մենք ընդունում ենք նուէրներ—Nakhitchévan s/Don Gr. Tchalkhouchian.